ՍՐԲԱՊԱՏԱԿԵՐՆԵՐԻ ՕԾՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

կան եկեղեցական որոշ տոներ, որոնց հանդեպ հայ հավատացյալ ժողովուրդը հատուկ վերաբերմունք ունի և ցանկանում է, որ ավելի հանդիսավորությամբ ու շքով կատարվի այն: Ժողովրդականություն վայելող այդպիսի տոներից մեկն է ս. Սարգիս զորավարի տոնը, որը մեծ հանդիսավորությամբ տոնվեց այս տարի սուրբ Սարգիս եկեղեցում: Եկեղեցու միաբանությունը իր հավատացյալ աղոթավորներին վաղօրոք հայտարարել էր, որ փետրվարի 5-ին, ս. Սարգիս զորավարի տոնին, կատարվելու է մի շարք սրբապատկերների օծումը: Նշանակված օրը, վաղ առավոտից, եկեղեցին և եկեղեցու բակը լցված էր քաղաքում բնակվող և շրջաններից եկած հայ հավատացյալների խուռն բազմությամբ:

Նախքան ս. պատարագը եկեղեցի ժամանեց Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ գերապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսը, որի ներկայությունը մեծ խանդավառություն առաջացրեց հավատացյալ բազմության մեջ:

Տեր Տեղակալի գլխավորությամբ հանդիսավոր պատարագին մասնակցում էին յոթ քահանաներ:

Պատարագի վերջում Սրբազան Հայրը հանդես եկավ չափազանց ազդու և հուզիչ քարոզով. նա նշեց մեր եկեղեցական հայրերի հայ կուլտուրային, հայ եկեղեցու դործին մատուցած ծառայությունը: Նա հատկապես կանգ առավ եկեղեցական այն հայրերի գործունեության վրա, որոնց պատկերներն օծվելու էին, ինչպիսին են՝ Փրկչի 12 Առաքյալները, ս. Գրիգոր լուսավորիչը, թարգմանիչներ ս. Սահակն ու ս. Մեսրոպը, ս. Ներսես Շնորհալի Հայրապետը և ս. Սարգիս զորավարը:

Ամսի 5-ի ս.Սարգիս զորավարի տոնը, իր արտակարգ հանդիսավորությամբ, եկեղեցական մեծ տոն հանդիսացավ և հոգևոր մեծ մխիթարություն ու հաճույք պատճառեց ներկա եղող հավատացյալներին:

Եկեղեցու դավիթը բազմությունից դատարկվեց ուշ երեկոյան:

Տաճատ ավ. քահանա Տ.-ՎԱՐԴԱՆՅԱՆ